

ՍԵՐԱՍՏԱՅԻ ԳՐԻՉ ԱՐԻՍՏԱԿԷՍ

15-րդ դարի հայ գրչութեան արուեստի պատմութեան մէջ ցոլանում է մի վաստակաւոր գրչի պայծառ կերպարը: Դա զեղարուեստական ձիրքով օժտուած գրիչ Աբրահատացի Արիստակէսն է, որ իր հասարակական գործունէութեան ընթացքում հայ ժողովրդին աւանդ է թողել մի շարք ձեռագիր մատենաներ, որոնցից մեզ հասել են միայն մի քանիսը, որոնք այսօր ցայտուն դադափար են տալիս նրա գրչական արուեստի հմտութեան և զեղարուեստական ճաշակի մասին:

Արիստակէսի հիմնական կրթութեան էջերը ձեռն տանում են 15-րդ դարի Դարանաղեաց դաւառի, «մեծափառ և հռչակաւոր» Աւագ վանքը, որ եղել է իր Ժամանակի գրչութեան և մանրանկարչութեան արուեստների կեդրոններից մէկը: Այնտեղ վաստակել են մի խումբ գրչագիրներ և իրենց ընդօրինակած ձեռագրերով հարստացրել հայ մատենագրութեան դանձարանը:

Աւագ վանքի դպրոցում Արիստակէսն ուսանում է նոյն մենատառների առաջնորդ և քաջ հետոր Գէորգ վարդապետի մօտ, ինչպէս ինքն է յիշատակում 1408 թուին գրած «Մանրութունք» ձեռագրի յիշատակարանում. «...գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրութունք... ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս զերմաստ քաջ հետորին և տիեզերալոյս վարդապետին մեծին Գէորգեա, բազմերախտ սուրբ հաւրն իմոյ և վարժապետին»: Աւագ վանքումն էլ գրիչ Արիստակէսը մշակում է իր հոգում թաղնուած զեղարուեստական ձիրքը: Այնուհետեւ նուիրում է գրչական արուեստի զարգացմանը և ընդօրինակում մի շարք ձեռագրեր:

Վաստակաւոր գրչից աւանդ մնացած մի ձեռագիր յիշատակարանը պատկերում է Դարանաղեաց դաւառի «մեծափառ» Աւագ վանքը, որ նա 1405 թուին «լաւ յընտիր աւրինակէ» գրում է մի «Մանրութունք», որը միջնադարի հայ երաժշտութեան զեղեկութիւնը պատկերող մի ուշադրաւ աւանդ է, իսկ ձեռագրի յիշատակարանն արժէքաւոր է նրանով, որ հայ երաժշտու-

թեան պատմութեան համար մի կարեւոր տեղեկութիւն է հաղորդում, ընդգծելով թէ «Մանրութունք»-ի «լաւ և յընտիր» օրինակը խմբագրուել է Արքակաղնի վանքի (Կիլիկիայում) երաժշտական դպրոցում և «յարմարած» է նոյն մենատառների տաղանդաւոր «առաջին երաժշտապետաց» համար: Ահա յիշատակարանի վկայութիւնը. «...գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրութունք, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ է յարմարած առաջին երաժշտապետացն սուրբ ուխտին Արքակաղնոյն, ձեռամբ անիմաստ գրչի և յոյժ մեղապարտի Ռբտակիսի, ի թվ. ՊՄԴ. (584+551=1405), ի մեծափառ անապատիս որ կոչի Աւագ վանք... ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս քաջ հետորին և տիեզերալոյս վարդապետին մեծին Գէորգեա, բազմերախտին իմոյ և ուսուցչին»:

Երեք տարի անց, 1408 թուին, գրիչ Արիստակէսը դարձեալ Դարանաղեաց դաւառի «մեծափառ և հռչակաւոր» Աւագ վանքում, «լաւ և յընտիր աւրինակէ և բազում աշխատութեամբ» ընդօրինակում է մի նոր «Մանրութունք», որը միջնադարի հայ երաժշտութեան արուեստի պատմութեան համար նոյնպէս մի թանկագին աւանդ է: Ձեռագրի յիշատակարանում գրիչն ընթերցողներին խնդրում է գրչագրի թերութիւնների և սխալների համար «անմեղադիր լինել»։ «...Արդ, աղաչեմ դամենեսեան, որք հանդիպիք սմա ուսանելով և կամ աւրինակելով, յիշեալիք... և զիս եւս... և աղաչեմ զձեզ... անմեղադիր լինել մեզ, զի այսքան էր կար մեր, և թէ լինի պակաս կամ աւելի, զպակասն դուք լցէք և դաւելորդն ի բաց հանէք և թողէք զմեզ առանց բամբասանաց...»:

Ձեռագրի յիշատակարանն ուշադրաւ է նաեւ այն տեսակէտից, որ գրչի նրախան ծանր դրութեան մասին փաստական տեղեկութիւններ է տալիս: Նա իր զժուարթին աշխատանքը, ձեռագրի ընդօրինակութիւնը, կատարում է «դառն ժամանակում», իսկ չքաւորութեան պատճառով կերակրում է «շաղկապով—մալէղով (ալիւրով պատրաստուած կերակուր) և կօրեկէ ճաթնով»: Ահա գրչի տողերը. «...բայց եղև զբաւ սորա ի յութհարութ թվականի և յիսուն

և եւթն յաւելորդի... Ո՛հ, ո՛հ դառն ժամանակիս, դարձեալ աղաչեմ, զի անմեղագիր լինիցիք, զի չաղղամով ժալէշն և կորեկէ ճաթն օղնական եղեւ մեզ ի գրելն: Է՛, վա՛յ ուեղուկ ասեմ հազար բերան...»:

Գրչագիր մատենի յիշատակարանն առանձին արժէք է ներկայացնում նաեւ նրանով, որ յիշատակում է «բաղմերախտ, պատուելի և հեղահոգի» Տէր Սահակ երաժշտապետի անունը, որ 15-րդ դարի հայ երաժշտական արուեստի զարգացման խնդրում մեծ ծառայութիւն է մատուցում: Նոյնպէս նա է, որ 1408 թուին, «Մանրուսմունք»-ի օրինակն երրորդ անգամ տրամադրում է գրիչ Արիստակէսին: Արձանագրենք յիշատակարանի վկայութիւնը. «...Այլեւ յիշեալիք զբաղմերախտ և զհոգեւոր ծնաւոն սորին՝ զերաժշտապետն մեր, զպատուելի և զհեղահոգի զարբանեալ կրանաւորն՝ զտէր Սահակ սպասաւոր բանի... որ զաւրինակն պարզեւեաց մեզ երկրորդ անգամ, և այս երրորդ»:

Այնուհետեւ, 1412 թուին, գրիչ Արիստակէսը գրում է մի նոր ձեռագիր: Դա ժամանակի խոշոր գիտնական, Եսայի Նշեցու փայլուն աշակերտ, նշանաւոր վարդապետ ու իմաստասէր և Տաթևի նոր բարձր տիպի դպրոցի հիմնադիր՝ Յովհան Որոտնեցու (1313(5)–1386 թ.) իմաստասիրական մեկնութիւններն են: Զեռագրի յիշատակարանում կարդում ենք. «...Արդ, և ընդ արժանաւորացս յիշեալիք և զանաբժան՝ զբաղմաշարաւ անձս զըմբոստակէս Սերաստացի... ի թուականութեան հայոց մեծաց երկգոռանից տասանց և եօակի քանից, նեղակ թուով յաւելից (1412 թ.) ... Եւ եղեւ զրաւ սորա ի մեծափառ անապատիս, որ կոչի Ավազ վանք»:

Նոյն 1412 թուին գրիչ Արիստակէսն Աւազ վանքում գրում է և հայ զրչութեան արուեստին նուիրում տաղանդաւոր աստուածաբան, փիլիսոփայ, նշանաւոր բնագէտ և նկարիչ՝ Գրիգոր Տաթևացու (1346–1409) «Ոսկեփորիկ»-ը, որի յիշատակարանից առաջ բերենք հետեւեալ տողերը. «Արդ, զրեցաւ քաղուածոյս աստուածաբանութեան ի հաւաքմանէ առն մեծի վարժապետի՝ առնուն արթուն զուարթուն առն Գրիգորիսի, ձեռամբ եղկելի և կրկնամեռիկ անձին Ռըս-

տակիսի, ի գերահռչակ անապատս որ կոչի Ավազ վանք... Արդ, յերես անկեալ աղաչեմ զհանդիպողսդ յիշել սրտի մտաւք զթշուառականս ողորմայիւ ի տէր... զբեցաւ ի թվ. ԳԿԱ. (861+551=1412), յամբանն աւչոստոսի, ի փառս Քրիստոսի»:

Յիշատակարանի վերջում գրիչ Արիստակէսը ձեռագիրը կարգացողից կամ ընդօրինակողից խնդրում է «անմեղագիր լինել» ձեռագրի սխալների համար. «...Արդ, աղաչեմ անմեղագիր լինել մեզ վասն սխալանաց և անարհեստ ֆերդողութեանս, ներել աղաչեմ հայրաբար և ուղղել եղբայրաբար...»:

Նշենք, որ Արիստակէս Սերաստացու ընդօրինակած «Լուծմունք իմաստասիրական զրոց Յովհաննու Որոտնեցոյ» և «Ոսկեփորիկ Գրիգորի Տաթևացոյ» ձեռագիրները 15-րդ դարի գրչական արուեստի թանկագին աւանդներ են, որոնց յիշատակարանները բաղմարդին գրիչ Արիստակէսի մասին ընդգծում են, որ նրա զրչական արուեստի գործունէութեան գլխաւոր վայրը հանդիսացել է Դարանաղեաց դաւառի «հռչակաւոր» Աւազ վանքը, որի կամարների ներքոյ նա աշխատել է ութն երկար տարիներ (1404–1412 թուականը): Այնուհետեւ վաստակաւոր գրիչ Արիստակէսին տեսնում ենք Արեւելեան Հայաստանում, ուր նա կարօտագին զրացուններով ողջունում է Աւազ վանքի զարոցական դասընկեր Յովհան Եղրեկացուն. «...Եւ յետ օուղ ինչ ժամանակի, զարձեալ ոմն բարեկամ եղբայր և ուսումնակից մեր եհաս առ մեզ՝ Արիստակէս անուն»:

Մի հանդամանք այժմ պարզ է, որ գրիչ Արիստակէսն Աւազ վանքում ամբողջ հոգիով նուիրուել է ձեռագրեր գրելու և ընդօրինակելու ծանր, բայց ազնիւ աշխատանքին և միշտ բարձր է պահել հայ զրչութեան արուեստի դրօշը: Նրա վաստակն արժանի է առանձին դնահատութեան:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Փաիկելի (Իրան)